



Կոստանդնուպոլսո Ամենապատիվ Տ. Շնորհ Պատրիարք Գալուստյանը Վարչավայում մասնակցել է Միջեկեղեցական խաղաղության մի համագումարի և տեղի Մայր տաճարում արտասանել հետևյալ ուղերձը, որ հրատարակում ենք ստորև:

ԱՄԵՆԱՊԱՏԻԻ Ս. ՊԱՏՐԻԱՐԷ ՀՕՐ ՈՒՂԵՐԶԸ ՎԱՐՇԱԽԻՈՅ ՄԷՋ

Սիրեցեալ բարձրաշնորհ եւ գերաշնորհ եպիսկոպոս եղբայրներ եւ սիրելի եղբայրներ ի Քրիստոս,

Գոհութիւն պէտք է մատուցանենք Աստուծոյ՝ մեզ ամենքս այս միջկրօնական հաւաքոյթին բերած ըլլալուն համար, աղօթելու եւ գործելու որպէսզի խաղաղութիւնը տիրապետէ մարդկութեան մէջ:

Շնորհակալ ենք «մարդիկ եւ կրօններ» կոչուած ընկերակցութեան, որ կազմակերպած է այս հաւաքոյթը, որուն նպատակն է նախ դիմել մարդկութեան խաղաղութեան համար, եւ ապա ընծայել զմեզ այսպիսի խաղաղութեան հաստատման եւ պահպանութեան երկրի վրայ:

Սիրելի բարեկամներ, տարակոյս չկայ, որ խաղաղութիւնը ցանկալի նպատակակէտն է համայն մարդկութեան համար, բացի անշուշտ ուղմամբերք արտադրողներէն, եւ անոնցմէ որոնք կը կարծեն որ պատերազմէն շահ մը ունին: Սակայն պէտք է յիշենք մեր Տիրոջ յաւերժական պատգամը, «որ սուր առցէ, սուրով անկցի»: «Սուր առնողը՝ սուրով պիտի իյնայ»:

Տարակոյս չկայ նաեւ, թէ Աստուած կ'ուզէ խաղաղութեամբ օծտել մարդկութիւնը եւ ամբողջ իր արարչութիւնը: Սակայն դժբախտ իրականութիւնը այն է, որ շատ քիչ խաղաղութիւն կայ երկրի վրայ: Ասոր պատճառը այն չէ որ մենք խաղաղութիւնը չենք ուզեր, ընդհակառակը ամենքս ալ խաղաղութիւնը կ'ուզենք: Իրական պատճառն այն է, որ չենք ուզեր վճարել գինը, որ էական է խաղաղութեան տիրանալու համար: Այո, մենք պէտք է բան մը վճարենք որպէսզի կարենանք ձեռք ձգել խաղաղութիւնը: Օրինակ խաղաղութեան տիրանալու համար մենք պէտք է հրաժարինք մեր եսա-

սիրութենէն, պէտք է մերժենք ուրիշ ժողովուրդներու երկիրները եւ ստացումաժքները գրաւելու փորձութիւնը եւ հուսկ ապա՝ արդար վերաբերմունք ունենանք բոլոր մարդոց հանդէպ: Ասոնք քանի մը հատն են այն գիներէն զորս պէտք է վճարենք նախ քան խաղաղութեան տիրանալը:

Դժբախտաբար ոչ ոք կ'ուզէ ոչինչ վճարել խաղաղութիւն ձեռք ձգելու համար: Այս է պատճառը թէ ինչո՞ւ այնքան կարճ շրջաններ կան անդորրութեան եւ այնքան երկայն ժամանակամիջոցներ կան պատերազմներու մարդկային պատմութեան մէջ: Ահա թէ ինչո՞ւ մեծ մարգարէն Երեմիա երկու անգամ ըսած է իր գիրքին մէջ. «Եւ ասէին. խաղաղութիւն, խաղաղութիւն, եւ ոչ գոյր խաղաղութիւն», «Ամէն մարդ կ'ըսէր, խաղաղութիւն, խաղաղութիւն, երբ այն գոյութիւն չունէր». Երմ. Զ 14 եւ Ը 11:

Տիրոջ ծնունդին, Աստուծոյ փառք տալէն յետոյ կը տրուի սա պատգամը, «Յերկիր խաղաղութիւն եւ ի մարդիկ հանութիւն»: «Խաղաղութիւն իջնէ երկրի վրայ, եւ բարի կամեցողութիւն՝ մարդոց մէջ»: Այս երկուքը միասին կ'ընթանան. երբ «բարի կամեցողութիւն» կայ մարդոց մէջ, այն ատեն ինքնին կը տիրապետէ «խաղաղութիւն երկրի վրայ»:

Աշխարհի վրայ տիրապետելիք խաղաղութիւնը նախ պէտք է որոնել մեր սիրտերուն մէջ. եսասիրտութիւնը, որուն ակնարկեցի վերել, պէտք է ամէնէն առաջ հանուի մեր սիրտերէն: Ամէն մարդ, հոգ չէ թէ ինչ ազգի կը պատկանի, նախ խաղաղութեան մէջ ըլլայ Աստուծոյ հետ, եւ իր անմիջական դրացիին հետ: Ու ասիկա կը նշանակէ սրտի փոփոխութիւն եւ ապաշխարութիւն, որ Յովհաննէս Մկրտիչ քարոզեց: Ան կարապետը եղաւ Յիսուսին, մեր Տիրոջ, խաղաղութեան իշխանին, զոր յայտարարեց իբրեւ ներկայ մեր մէջ: Նոյնպէս մեր ապաշխարանքն ալ պիտի ապահովէ Տէր Յիսուսի եւ իր խաղաղութեան ներկայութիւնը մեր մէջ, ու մեր շրջապատին մէջ:

Թերեւս ոչ մէկ ժողովուրդ խաղաղութեան չէ ցանկացած այնքան լըրջօրէն, որքան հայ ժողովուրդը: Սակայն, դժբախտաբար ոչ մէկ ազգ այնքան քիչ վայելած է զայն որքան մեր ժողովուրդը: Խաղաղութիւնը շարունակ մեր աղօթքին նիւթ եղած է դարերով: Մեր շատ մը կրօնական արարողութիւնները կը սկսին հետեւեալ մաղթանքով. «Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեացուք»: «Կրկին ու կրկին խաղաղութեան համար Տիրոջ աղաչենք»:

Մեր Ս. Պատարագի մատուցման ընթացքին պատարագիչը կը դառնայ ժողովուրդին անոնց աւանդելու համար Քրիստոսի խաղաղութիւնը ըսելով. «Խաղաղութիւն ամենեցուն» ու ասիկա ամէլի քան տասն անգամներ: Նմանապէս Ս. Պատարագի գրեթէ մէջտեղը գեղեցիկ երգ մը կայ, որ իր մէջ կը մարմնացնէ խաղաղութեան ոգին, շատ բանաստեղծական ձեւով:

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ,

Որ էնն Աստուած խառ բազմեցաւ:

Խաղաղութեան ձայն հնչեցաւ, սուրբ ողջունի հրաման տրւաւ,

**Եկեղեցիս մի անձն եղեւ, համբոյրս յօդ լրման տրաւ:
Թշնամութիւնը հեռացաւ, սէրն չընդհանորըս սրփռեցաւ:**

Նմանապէս Ս. Պատարագի վերջաւորութեան մօտ, Ս. Հաղորդութենէն առաջ ունինք ժողովրդային երգ մը զոր մենք պարզապէս կը կոչենք «Տէր Ողորմեա», որ կը սկսի հետեւեալ աղերսանքով.

«Ամենասուրբ Երրորդութիւն

Տուր աշխարհիս խաղաղութիւն»

Կը կրկնենք: Աստուած պատրաստ է իր խաղաղութիւնը տալու, սակայն դժբախտաբար մարդիկ պատրաստ չեն զայն ընդունելու, որովհետեւ պատրաստ չեն իրենց սիրտերը փրկելու կամ արտօնելու, որ Աստուած փոխէ զանոնք:

Ի վերջոյ սիրելի բարեկամներ, կ'ուզենք խաղաղութեան մասին մեր այս քանի մը խորհրդածութիւնները վերջաւորութեան բերել աղօթքով մը, դարձեալ վերցուած մեր Ս. Պատարագէն:

«Խաղաղութեամբ քով, Քրիստոս Փրկիչ մեր, որ ի վեր է քան զամենայն միտս եւ բանս, ամրացո զմեզ եւ աներկիւղ պահեա յամենայն չարէ: Հաւասարեա զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո, որք հոգւով եւ ճշմարտութեամբ Քեզ երկրպագանեն, վասնզի Ամենասուրբ Երրորդութեանդ վայել ենք փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս եւ յաւիտենից. ամէն»:

Ըստ «Նոր Մարմարա» թերթի 1989 թ. սեպտեմբերի 22-ի համարի՝ որոշ կրճատումով:

